ԿԱՐԾԻՔ

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» վերտառությամբ դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ (այսուհետ՝ Հեղինակ) դոկտորական ատենախոսության (այսուհետ՝ ատենախոսություն կամ աշխատանք) թեման վերաբերում է Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությանը և դրա սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրներին:

Ատենախոսության հրատապությունը պայմանավորված է արդի ժամանակի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի գործընթացների իրավական կարգավորման տեսական հիմնադրույթների և գործնական առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ:

Հեղինակի ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ այն իրենից ներկայացնում է ամփոփ և ամբողջական գիտական հետազոտություն, որում Հեղինակի կողմից արվել են գիտական վերլուծության և քննարկման կարիք ունեցող որոշ բարդ հարցադրումներ, լուսաբանվել են առաջնահերթ և հրատապ լուծում ակնկալող մի շարք հիմնահարցեր, առաջադրվել են հայեցակարգային նոր մոտեցումներ:

Հեղինակի դոկտորական ատենախոսության մեջ քննարկվել են մեծաթիվ հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր իրավաբան գիտնականների աշխատություններում: Սակայն, թեև հետազոտության առարկայի հետ կապված որոշ հարցեր հանդիսացել են ինչպես տեսաբանների, այնպես էլ պրակտիկ աշխատողների ուսումնասիրությունների նյութ, այնուհանդերձ ներկայումս սույն թեման դեռևս շարունակում է մնալ հետաքրքիր, արդիական նաև՝ որոշ առումով խնդրահարույց:

Այսպիսով, հետազոտության նպատակն ու խնդիրները ներկայացված են հնարավորինս հստակ, իսկ աշխատանքում արված հետևություններն ու առաջարկությունները գերազանցապես հիմնված են օգտագործված տեսական և նորմատիվ նյութերի վերլուծության և անձնական դատողությունների վրա: Ընդ որում, Հեղինակն օգտվել է թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, որոնք էապես հարստացրել են ատենախոսության բովանդակությունը:

Այդպիսով, ակնհայտ է, որ ատենախոսության թեման արդիական է, հետազոտելի և պիտանի գիտական նոր լուծումներ առաջադրելու տեսանկյունից, ինչը բավարար և անհրաժեշտ խորությամբ հիմնավորվել է Հեղինակի կողմից:

Հարկ է նշել, որ աշխատանքում արված համալիր ուսումնասիրության արդյունքում Հեղինակի կողմից կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի տեսական եզրահանգումներ, այլ նաև ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, գործող օրենսդրական ակտերի և օրենսդրական նախագծերի պրակտիկ կատարելագործման շուրջ մի շարք գործնական առաջարկություններ, ինչպես նաև գիտական կոնկրետ մոտեցումներ են առաջադրվել Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության կատարելագործման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ հետազոտության առարկան կառուցելով Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության և դրա սահմանադրահիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրների վերհանման ու դրանց լուծումներ առաջարկելու շուրջ՝ Հեղինակի կողմից կատարվել են հետաքրքրաշարժ վերլուծություններ և աշխատանքի եզրակացությունում ներկայացվել են այդ ուսումնասիրությունների և վերլուծությունների հիմնական արդյունքները: Ատենախոսութան թեմայով հրապարակված են մենագրություն և բազմաթիվ աշխատանքներ:

Ատենախոսի սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ հաջողված, գիտականորեն հիմնավորված և ինքնուրույն կերպով կատարված զերծ չէ որոշ թերություններից, ուստի ստորև անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ատենախոսության վերաբերյալ հետևյալ նկատառումներն ու առաջարկությունները.

ա) ատենախոսության առնչությամբ առաջին գլխում խորապես չի ուսումնասիրվել մեր նախնիների թեմայի հետ առնչվող քաղաքաիրավական միտքը,

բ) նպատակահարմար կլիներ, որպեսզի Հեղինակն ատենախոսության շրջանակներում ավելի մանրամասն անդրադառնար իր իսկ կողմից առաջ քաշված «պետությունների վիրտուալ տարածքը (սահման)» սոցիալական ֆենոմենին, քանի որ այն իսկապես սոցիալական-իրավական նոր ֆենոմեն է, և ավելի հետազոտման կարիք ունի,

գ) ցանկալի կլիներ որպեսզի Հեղինակն անդրադառնար Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացի հասարակական ընկալման և պատրաստակամության հարցերին, քանի որ վերջին շրջանում եվրոպական երկրների փորձը վկայում է այն մասին, որ միգրացիոն քաղաքականությունը հաջողված կամ ձախողված է լինում նաև հասարակական աջակցության կամ մերժողականության շնորհիվ, օրինակ՝ միգրացիոն քաղաքականության խնդիրների իրականացում կամավորների կամ հասարակական կազմակերպությունների աջակցության շնորհիվ կամ հասարակության անհանդուրժող վերաբերմունքի արտահայտում (այդ թվում քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից) միգրանտների վերաբերյալ և այլն,

դ) սրտանց ողջունելով ատենախոսության չորրորդ գլխի վեցերորդ պարագրաֆում հեղինակի կողմից անդրադառնալը Արցախի Հանրապետության քաղաքացիության հիմնախնդիրների միգրացիոն գործընթացների համակարգմանը,

համամիտ լինելով հեղինակի կողմից կատարված դատողությունների հետ, սակայն գտնում ենք, որ նյութն ավելի հարուստ կլիներ, եթե նշված պրոբլեմի ճշմարիտ վերլուծությունների արդյունքում նա արտահայտեր իր գիտական հիմնավորված տեսակետը, այսինքն չի եզրահանգել Արցախի հեռանկարների վերաբերյալ,

ե) անհրաժեշտ ենք համարում նշել, որ օգտագործված գիտական հոդվածների ցանկում տեղ են գտել ուսումնամեթոդական գրքեր և դասագրքեր (տես՝ 40, 63, 67, 70, 86, 100 և այլն), որը, մեր կարծիքով, անընդունելի է, և մեր խորին համոզմամբ, չեն կարող համարվել գիտական սկզբնաղբյուրներ: Իսկ ինչ վերաբերում է օգտագործված գրականության ցանկին, կարծիք է ստեղծվում, որ քննարկման թեմային առնչվող գիտական մենագրություններ (2016 թ-ից) և գիտական հոդվածներ (2018 թ-ից) Հայաստանի և Հայաստանի սահմաններից դուրս չեն տպագրվել,

զ) և, վերջապես, օգտագործված գրականության ցանկում ռուսական և ռուսալեզու գիտական գրականության և էլեկտրոնային աղբյուրները (օրինակ՝URL.:https://www.ru.m.wikipedia.org/wiki/Античность/ дата обращения: 01.01.2022) ձևակերպումները 50% և ավելի (էջ. 432 – 444, 451 – 452), ամբողջությամբ չէ, որ համապատասխանում են Ռուսաստանի Դաշնության Գոստանդարտների 2003 թ. մարտի 3-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 1-ից գործող ГОСТ-Р 6.30-2003 (խմբագրությամբ): Կան նաև տեխնիկական բնույթի այլ վրիպումներ, որոնք ընդհանուր առմամբ կրում են մասնակի բնույթ և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ շարադրված դիտարկումներն ու նկատառումները որևէ կերպ չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Գրաքննվող ատենախոսությունը պատրաստված է պատշաճ գիտական մակարդակով, իսկ հիշատակված դիտողություններն առավելապես կրում են բանավեճային բնույթ և ենթակա են լրացուցիչ քննարկման:

Այսպիսով՝ ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ մեր նկատառումները, հարկ ենք համարում նշել, որ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝

«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի ատենախոսությունը ամփոփ և ավարտուն գիտական աշխատանք է, որն ուղղված է կարևորագույն գիտական հիմնախնդիրների ուսումնասիրությանը, այն իր ծավալով, ձևավորմամբ, գիտատեսական վերլուծություններով, բավարարում է նման աշխատանքների համար և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» դոկտորական ատենախոսությանը ներկայացվող ու ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին, կատարված է բարեխղճորեն և բարձր մակարդակով, ունի զգալի գիտագործնական նշանակություն, ուստի, գտնում եմ, որ ատենախոսությունը կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության՝ ներկայացված նկատառումների հաշվառման պարագայում:

Պաշտոնական ընդդիմախոս՝

«Մանց» համալսարան ՍՊԸ-ի տնօրեն՝ ռեկտոր, ՍՍՀՄ իրավաբանական գիտությունների դոկտոր

(ստորագրություն)

Ավագյան Ռուբեն Հովսեփի

«17» «հոկտեմբերի» 2022թ.

Պաշտոնական ընդդիմախոսի

Ավագյան Ռուբեն Հովսեփի ստորագրության իսկությունը

(ա. ա. հ.)

հաստատում եմ.

«Մանց» համալսարան ՍՊԸ-ի գիտ քարտուղար,

իրավաբանական գիտությունների թեկնածու Երանուհի Թումանյանց

«17» «հոկտեմբերի» 2022թ.